ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Դանիայի Թագավորության Կառավարությունը (այսուհետև՝ Կողմեր),

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ դյուրացնել ժողովուրդների միջև շփումները՝ որպես տնտեսական, հումանիտար, մշակութային, գիտական և այլ կապերի կայուն զարգացման կարևոր պայման, դյուրացնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին վիզաների տրամադրումը,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ 2013 թվականի հունվարի 10-ից Եվրոպական միության բոլոր քաղաքացիները 90 օրը չգերազանցող ժամանակահատվածով Հայաստանի Հանրապետություն ուղևորվելիս կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցմամբ անցնելիս ազատված են վիզայի պահանջից,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ եթե Հայաստանի Հանրապետությունը վերականգնի վիզայի պահանջները Եվրոպական միության քաղաքացիների կամ նրանց որոշ կատեգորիաների համար, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին սույն Համաձայնագրով տրամադրված նույն դյուրացումները, ինքնաբերաբար, փոխադարձության հիման վրա կկիրառվեն Դանիայի Թագավորության քաղաքացիների նկատմամբ,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ վիզայի տրամադրումը դյուրացնելը չպետք է հանգեցնի անօրինական ներգաղթի, և հատուկ ուշադրություն դարձնելով անվտանգության ու հետընդունման հարցերին,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար համապատասխան ժամկետներում առանց վիզաների ճանապարհորդության ռեժիմ սահմանելու նպատակով աստիճանական քայլեր ձեռնարկելու Եվրոպական միության մտադրությունը՝ պայմանով, որ առկա լինեն պայմաններ լավ կառավարելի և անվտանգ շարժունակության համար,

ՀԻՄՆՎԵԼՈՎ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին 2012 թվականի դեկտեմբերի 17-ին ստորագրված համաձայնագրի և Դանիայի Թագավորությանը վերաբերող դրան կցված համատեղ հայտարարության վրա,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ՀՈԴՎԱԾ 1

Նպատակը և կիրառման շրջանակը

1. Սույն Համաձայնագրի նպատակն է դյուրացնել վիզաների տրամադրումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Դանիայի Թագավորության տարածք և Շենգենյան գոտու ցանկացած այլ անդամ պետություն 180 օրվա յուրաքանչյուր ժամանակահատվածում 90 օրից ոչ ավել տևողությամբ ծրագրված այցի համար:

2. Եթե Հայաստանի Հանրապետությունը վերականգնի վիզայի պահանջները Եվրոպական միության քաղաքացիների կամ նրանց որոշ կատեգորիաների համար, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին սույն Համաձայնագրով տրամադրված նույն դյուրացումները, ինքնաբերաբար, փոխադարձության հիման վրա կկիրառվեն Դանիայի Թագավորության քաղաքացիների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 2

Ընդհանուր դրույթը

1. Սույն Համաձայնագրով նախատեսված՝ վիզայի տրամադրման դյուրացումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար կիրառվում են այնքանով, որքանով նրանք ազատված չեն վիզայի պահանջից Եվրոպական միության օրենսդրությամբ կամ Դանիայի Թագավորության ներպետական օրենսդրությամբ, սույն Համաձայնագրով կամ այլ միջազգային համաձայնագրերով:

2. Հայաստանի Հանրապետության կամ Դանիայի Թագավորության ներպետական օրենսդրությունը կամ Եվրոպական միության օրենսդրությունը կիրառվում է սույն Համաձայնագրի դրույթներով չկարգավորվող այնպիսի հարցերի նկատմամբ, ինչպիսիք են վիզայի տրամադրումը մերժելը, ճամփորդական փաստաթղթերի ճանաչումը, ապրուստի բավարար միջոցների վերաբերյալ ապացույցները և մուտքի մերժումն ու վտարման միջոցառումները:

ՀՈԴՎԱԾ 3

Սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակով՝

a) «Դանիայի Թագավորության քաղաքացի» նշանակում է՝ ցանկացած անձ, ով ունի Դանիայի Թագավորության քաղաքացիություն՝ Դանիայի Թագավորության ներպետական օրենսդրությանը համապատասխան.

b) «Հայաստանի Հանրապետության քաղաքացի» նշանակում է՝ ցանկացած անձ, ով ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությանը համապատասխան.

c) «վիզա» նշանակում է՝ Դանիայի Թագավորության կողմից տրված թույլտվություն կամ Դանիայի Թագավորության կողմից ընդունված որոշում՝ հետևյալ նպատակով.

- մուտք գործելու Դանիայի Թագավորության տարածք կամ Շենգենյան գոտու ցանկացած այլ անդամ պետություն 180 օրվա ցանկացած ժամանակահատվածի ընթացքում 90 օրից ոչ ավել ժամանակահատվածով ծրագրված այցի համար.

- մուտք գործելու Դանիայի Թագավորության կամ Շենգենյան գոտու ցանկացած այլ անդամ պետության տարածքով տարանցմամբ անցելու համար.

d) «օրինական բնակվող անձ» նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ում թույլատրվել կամ իրավունք է տրվել ոչ ավել, քան 90 օր գտնվել Շենգենյան գոտու անդամ պետության տարածքում՝ Եվրոպական միության օրենսդրության կամ ներպետական օրենսդրության հիման վրա.

e) «Շենգենյան գոտու անդամ պետություն» նշանակում է՝ ցանկացած պետություն, որն ամբողջությամբ կիրառում է Շենգենյան դրույթները (Acquis).

f) «Շենգենյան տարածք» նշանակում է՝ Շենգենյան գոտու անդամ պետությունների տարածք:

ՀՈԴՎԱԾ 4

Ուղևորության նպատակի վերաբերյալ փաստաթղթերով հիմնավորված ապացույց

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետևյալ կատեգորիաների համար հետևյալ փաստաթղթերը բավարար են՝ հիմնավորելու համար ճամփորդության նպատակը դեպի մյուս Կողմ.

a) մերձավոր ազգականների համար՝ ամուսիններ, երեխաներ (ներառյալ որդեգրվածները), ծնողներ (ներառյալ խնամակալները), տատիկներ, պապիկներ և թոռներ, ովքեր այցելում են Դանիայի Թագավորության տարածքում օրինական բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին կամ Դանիայի Թագավորության տարածքում բնակվող Դանիայի Թագավորության քաղաքացիներին՝

- գրավոր դիմում հյուրընկալող անձից.

b) պաշտոնական պատվիրակությունների անդամների՝ ներառյալ նման պատվիրակությունների մշտական անդամների համար, որոնք Հայաստանի Հանրապետությանն ուղղված պաշտոնական հրավերի հիման վրա մասնակցում են հանդիպումների, խորհրդակցությունների, բանակցությունների կամ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև միջկառավարական կազմակերպությունների կողմից Դանիայի Թագավորության տարածքում կազմակերպվող միջոցառումների՝

- Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրված գրություն, որով հաստատվում է, որ դիմողն իր պատվիրակության անդամ է, համապատասխանաբար՝ իր պատվիրակության մշտական անդամ, ով մեկնում է Դանիայի Թագավորության տարածք՝ մասնակցելու վերը նշված միջոցառումներին, որին կից ներկայացվում է պաշտոնական հրավերի պատճենը.

c) դպրոցականների, ուսանողների, հետբուհական կրթություն ստացող անձանց և ուղեկցող ուսուցիչների համար, ովքեր ձեռնարկում են ուղևորություններ ուսման կամ ուսումնական վերապատրաստման նպատակներով ներառյալ՝ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև դպրոցի հետ կապված գործունեության այլ ոլորտների շրջանակում՝

- հյուրընկալող համալսարանի, քոլեջի կամ դպրոցի կողմից գրավոր դիմում, կամ ընդունման մասին վկայական, կամ ուսանողական քարտեր, կամ դասընթացներին մասնակցության մասին վկայականներ.

d) բուժման նպատակով այցելող և ուղեկցող՝ անհրաժեշտ անձանց համար՝

- բուժհիմնարկի պաշտոնական փաստաթուղթ, որով հաստատվում է տվյալ հիմնարկում բուժօգնություն ստանալու անհրաժեշտությունը, ուղեկցման անհրաժեշտությունը և բուժման վճարումների համար բավարար ֆինանսական միջոցների մասին ապացույցը.

e) լրագրողների և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմի համար՝

- մասնագիտական կազմակերպության կամ դիմողի գործատուի կողմից տրված վկայական կամ այլ փաստաթուղթ, որն ապացուցում է, որ տվյալ անձը որակավորված լրագրող է, և որում նշվում է, որ ուղևորության նպատակն է լրագրողական աշխատանք կատարելը, կամ ապացուցում է, որ նա այն տեխնիկական անձնակազմի անդամ է, որն ուղեկցում է լրագրողին մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում.

f) միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցների և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձանց համար՝

- հյուրընկալող կազմակերպության, իրավասու մարմինների, ազգային սպորտային ֆեդերացիաների կամ Դանիայի Թագավորության ազգային օլիմպիական կոմիտեների կողմից գրավոր դիմում.

g) գործարարների և բիզնես կազմակերպությունների ներկայացուցիչների համար՝

- հյուրընկալող իրավաբանական անձի կամ ընկերության, կազմակերպության կամ այդպիսի իրավաբանական անձի կամ ընկերության գրասենյակի կամ մասնաճյուղի, Դանիայի Թագավորության պետական կամ տեղական իշխանությունների կամ կազմակերպող կոմիտեների կամ Դանիայի Թագավորության տարածքում անցկացվող առևտրային և արդյունաբերական ցուցահանդեսների, խորհրդաժողովների և համաժողովների կողմից տրված գրավոր դիմում, որը հաստատված է իրավասու մարմինների կողմից՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան,

h) Դանիայի Թագավորության տարածքում անցկացվող միջազգային ցուցահանդեսներին, խորհրդաժողովներին, համաժողովներին, սեմինարներին կամ այլ նմանատիպ միջոցառումներին մասնակցող մասնագետների համար՝

- հյուրընկալող կազմակերպության կողմից գրավոր դիմում, որը հաստատում է, որ տվյալ անձը մասնակցում է այդ միջոցառմանը.

i) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների և Դանիայի Թագավորությունում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձանց համար, որոնք ձեռնարկում են ուղևորություններ ուսումնական վերապատրաստումներին, սեմինարներին, խորհրդաժողովներին մասնակցելու նպատակներով, ներառյալ՝ փոխանակման ծրագրերի կամ համահայկական և համայնքային աջակցության ծրագրերի շրջանակներում.

- հյուրընկալող կազմակերպության կողմից տրված գրավոր դիմում, հաստատում, որ այդ անձը քաղաքացիական հասարակության կազմակերպության ներկայացուցիչ է կամ մասնակցում է համահայկական կամ համայնքային աջակցության գործունեությանը, և համապատասխան գրանցամատյանից վկայական նման կազմակերպության հիմնադրման մասին, որը տրվում է պետական մարմնի կողմից՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան.

j) գիտական, ակադեմիական, մշակութային և գեղարվեստական աշխատանքներին մասնակցող անձանց համար՝ ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերը՝

- գրավոր դիմում հյուրընկալող կազմակերպության կողմից՝ այդ աշխատանքներին մասնակցելու համար.

k) Հայաստանի Հանրապետությունում գրանցված տրանսպորտային միջոցների վարորդների համար, ովքեր իրականացնում են միջազգային բեռնափոխադրումների և ուղևորների փոխադրման ծառայություններ դեպի Դանիայի Թագավորության տարածք՝

- միջազգային ճանապարհային փոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ազգային ասոցիացիայից (միությունից) գրավոր դիմում, որում նշվում է ուղևորությունների նպատակը, երթուղին, տևողությունը և հաճախականությունը.

l) քույր քաղաքների և այլ քաղաքային մարմինների կողմից կազմակերպված պաշտոնական փոխանակման ծրագրերի մասնակիցների համար՝

- այդ քաղաքների վարչակազմի ղեկավարի/քաղաքապետի կամ քաղաքային իշխանությունների կողմից տրված գրավոր դիմում.

m) զինվորական և քաղաքացիական շիրիմներ այցելելու համար.

- պաշտոնական փաստաթուղթ, որը հաստատում է գերեզմանի գոյությունը և պահպանված լինելը, ինչպես նաև ազգակցական կամ այլ կապերը դիմողի և հանգուցյալի միջև:

2. Սույն հոդվածի նպատակներով՝ գրավոր դիմումը ներառում է հետևյալը.

a) հրավիրված անձի համար՝ անունը և ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, սեռը, քաղաքացիությունը, անձնագրի համարը, ուղևորության ժամկետը և նպատակը, մուտքերի քանակը և, համապատասխանաբար, ամուսնու և երեխաների անունները, ովքեր ճանապարհորդում են հրավիրված անձի հետ.

b) հրավիրող անձի համար՝ անունը, ազգանունը և հասցեն.

c) հրավիրող իրավաբանական անձի, ընկերության կամ կազմակերպության համար՝ լրիվ անվանումն ու հասցեն, և.

- եթե դիմումը տրվել է կազմակերպության կամ մարմնի կողմից՝ այն անձի անունը

և պաշտոնը, ով ստորագրել է դիմումը.

- եթե հրավիրող անձը իրավաբանական անձ կամ ընկերություն կամ նման իրավաբանական անձի կամ ընկերության գրասենյակ կամ մասնաճյուղ է՝ հիմնադրված Դանիայի Թագավորության տարածքում՝ գրանցման համարը, ինչպես պահանջվում է Դանիայի Թագավորության ներպետական օրենսդրությամբ:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված կատեգորիաների անձանց համար վիզաների բոլոր կատեգորիաները տրվում են պարզեցված ընթացակարգով՝ առանց պահանջելու ուղևորության նպատակի հետ կապված որևէ այլ հիմնավորում, հրավեր կամ վավերացում, որը նախատեսված է Դանիայի Թագավորության օրենսդրությամբ:

ՀՈԴՎԱԾ 5

Բազմակի մուտքի վիզաների տրամադրումը

1. Դանիայի Թագավորության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները մինչև 5 տարվա վավերականության ժամկետով բազմակի մուտքի վիզաներ են տրամադրում հետևյալ կատեգորիաների անձանց.

a) Դանիայի Թագավորության տարածքում բնակվող Դանիայի Թագավորության քաղաքացիներին կամ Դանիայի Թագավորության տարածքում օրինական բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին այցելող ամուսիններին, երեխաներին (ներառյալ որդեգրվածները), որոնց 21 տարին չի լրացել, կամ ովքեր գտնվում են խնամքի տակ, և՝ ծնողներին (ներառյալ խնամակալները).

b) կենտրոնական և տարածքային մարմինների և սահմանադրական ու բարձրագույն դատարանների անդամներին, ովքեր իրենց պարտականությունները կատարելիս սույն Համաձայնագրով ազատված չեն վիզայի պահանջից.

c) պաշտոնական պատվիրակությունների մշտական անդամներին, ովքեր Հայաստանի Հանրապետությանն ուղղված պաշտոնական հրավերների հիման վրա կանոնավոր պետք է մասնակցեն հանդիպումների, խորհրդակցությունների, բանակցությունների կամ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև Դանիայի Թագավորության տարածքում անցկացվող՝ միջկառավարական կազմակերպությունների

կողմից կազմակերպված միջոցառումների:

Շեղում կատարելով՝ այն դեպքերում, երբ հաճախակի կամ կանոնավոր ուղևորություն կատարելու անհրաժեշտությունը կամ մտադրությունն ակնհայտորեն սահմանափակվում է ավելի կարճ ժամանակահատվածով, բազմակի մուտքի վիզայի վավերականության ժամկետը սահմանափակվում է այդ ժամանակահատվածով, մասնավորապես, եթե

- «a» կետում նշված անձանց դեպքում՝ Դանիայի Թագավորությունում օրինական բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների օրինական բնակվելու թույլտվության վավերականության ժամանակահատվածը.

- «b» կետում նշված անձանց դեպքում՝ պաշտոնավարման ժամկետը.

- «c» կետում նշված անձանց դեպքում՝ եթե պաշտոնական պատվիրակության մշտական անդամի կարգավիճակի վավերականության ժամկետը.

հինգ տարուց պակաս է:

2. Դանիայի Թագավորության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները մինչև մեկ տարվա վավերականության ժամկետով բազմակի մուտքի վիզաներ են տրամադրում հետևյալ կատեգորիաների անձանց՝ պայմանով, որ նախորդ տարվա ընթացքում նրանք ստացել են նվազագույնը մեկ վիզա և օգտվել դրանից՝ իրենց այցելած պետության՝ մուտքի և գտնվելու վերաբերյալ ներպետական օրենսդրությանը համապատասխան.

a) պաշտոնական պատվիրակությունների անդամներին, ովքեր Հայաստանի Հանրապետությանը հասցեագրված պաշտոնական հրավերի հիման վրա կանոնավոր մասնակցում են հանդիպումների, խորհրդակցությունների, բանակցությունների կամ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև Դանիայի Թագավորության տարածքում միջկառավարական կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումների.

b) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին և Դանիայի Թագավորությունում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձանց, ովքեր կանոնավոր ուղևորություն են ձեռնարկում ուսումնական վերապատրաստումներին, սեմինարներին, խորհրդաժողովներին մասնակցելու նպատակներով, ներառյալ՝

փոխանակման ծրագրերի կամ համահայկական և համայնքային աջակցության ծրագրերի շրջանակներում.

c) միջազգային ցուցահանդեսների, խորհրդաժողովների, համաժողովների, սեմինարների կամ այլ նմանատիպ միջոցառումների մասնակցող մասնագետներին, ովքեր կանոնավոր ուղևորություն են կատարում Դանիայի Թագավորություն.

d) գիտական, մշակութային կամ գեղարվեստական գործունեությանը՝ ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերին մասնակցող անձանց, ովքեր կանոնավոր ուղևորություն են կատարում Դանիայի Թագավորություն.

e) ուսանողներին և հետբուհական կրթություն ստացող անձանց, ովքեր կանոնավոր ուղևորություն են կատարում ուսման կամ ուսումնական վերապատրաստման նպատակներով, ներառյալ՝ փոխանակման ծրագրերի շրջանակում.

f) քույր քաղաքների կամ այլ քաղաքային մարմինների կողմից կազմակերպված պաշտոնական փոխանակման ծրագրերի մասնակիցներին.

g) այն անձանց և նրանց ուղեկցող անձանց, ովքեր կանոնավոր այցելում են բուժման նպատակով.

h) լրագրողներին և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմին.

i) գործարարներին և բիզնես կազմակերպությունների ներկայացուցիչներին, ովքեր կանոնավոր ուղևորություն են կատարում Դանիայի Թագավորություն.

j) միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցներին և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձանց.

k) Հայաստանի Հանրապետությունում գրանցված տրանսպորտային միջոցների վարորդներին, ովքեր իրականացնում են միջազգային բեռնափոխադրումների և ուղևորների փոխադրման ծառայություններ դեպի Դանիայի Թագավորության տարածք:

Շեղում կատարելով առաջին նախադասությունից՝ եթե հաճախակի կամ կանոնավոր ուղևորություն են կատարելու անհրաժեշտությունը կամ մտադրությունն ակնհայտորեն սահմանափակվում է ավելի կարճ ժամանակահատվածով, բազմակի մուտքի վիզայի վավերականության ժամկետը սահմանափակվում է այդ ժամանակահատվածով:

3. Դանիայի Թագավորության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները առնվազն երկու (2) տարվա և առավելագույնը հինգ (5) տարվա վավերականության ժամկետով բազմակի մուտքի վիզաներ են տրամադրում սույն հոդվածի 2-րդ կետում նշված կատեգորիաների անձանց՝ պայմանով, որ նախորդ երկու (2) տարվա ընթացքում նրանք օգտվել են մեկ տարվա բազմակի մուտքի վիզաներից՝ Դանիայի Թագավորության կամ այցելած Շենգենյան գոտու անդամ այլ պետության՝ մուտքի և գտնվելու վերաբերյալ ներպետական օրենսդրությանը համապատասխան, եթե հաճախակի կամ կանոնավոր ուղևորություն կատարելու անհրաժեշտությունը կամ մտադրությունն ակնհայտ կերպով չի սահմանափակվում ավելի կարճ ժամանակահատվածով, որի դեպքում բազմակի մուտքի վիզաների վավերականության ժամկետը սահմանափակվում է այդ ժամանակահատվածով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված անձանց՝ Դանիայի Թագավորության կամ Շենգենյան գոտու ցանկացած այլ անդամ պետության տարածքում գտնվելու ընդհանուր ժամանակահատվածը չի գերազանցում 90 օրը յուրաքանչյուր 180 օր ժամանակահատվածի ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 6

Վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումների համար վճարները

1. Վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումների համար վճարը կազմում է 35 եվրո:

Վերոնշյալ գումարի չափը կարող է վերանայվել՝ սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընթացակարգին համապատասխան:

2. Չխախտելով սույն հոդվածի 3-րդ կետի դրույթների պահանջները՝ վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումների համար վճարներից ազատվում են հետևյալ կատեգորիաների անձինք.

a) թոշակառուները.

b) 12 տարեկանից ցածր տարիք ունեցող երեխաները.

c) կենտրոնական ու տարածքային մարմինների և սահմանադրական ու

բարձրագույն դատարանների անդամները, եթե նրանք սույն Համաձայնագրով ազատված չեն վիզայի պահանջից.

d) հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ուղեկցող անձինք՝ ըստ անհրաժեշտության.

e) Դանիայի Թագավորության տարածքում օրինական բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ Դանիայի Թագավորության տարածքում բնակվող Դանիայի Թագավորության քաղաքացիների մերձավոր ազգականները՝ ամուսինները, երեխաները (ներառյալ որդեգրվածները), ծնողները (ներառյալ խնամակալները), տատիկները, պապիկները և թոռները.

f) պաշտոնական պատվիրակությունների անդամները, ներառյալ պաշտոնական պատվիրակությունների մշտական անդամները, ովքեր Հայաստանի Հանրապետությանը հասցեագրված պաշտոնական հրավերի հիման վրա մասնակցում են հանդիպումների, խորհրդակցությունների, բանակցությունների կամ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև միջկառավարական կազմակերպությունների կողմից Դանիայի Թագավորության տարածքում կազմակերպվող միջոցառումների.

g) դպրոցականները, ուսանողները, հետբուհական կրթություն ստացողները և ուղեկցող ուսուցիչները, ովքեր ուղևորություն են ձեռնարկում ուսման կամ ուսումնական վերապատրաստման նպատակներով, ներառյալ՝ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև դպրոցի հետ կապված գործունեության այլ ոլորտների շրջանակում.

h) լրագրողները և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմը.

i) միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցները և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձինք.

j) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները և Դանիայի Թագավորությունում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձինք, ովքեր ուղևորություն են ձեռնարկում ուսումնական վերապատրաստումներին, սեմինարներին, խորհրդաժողովներին մասնակցելու նպատակներով, ներառյալ՝ փոխանակման ծրագրերի կամ համահայկական և համայնքային աջակցության ծրագրերի շրջանակներում.

k) գիտական, ակադեմիական, մշակութային կամ գեղարվեստական գործունեությանը, ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերը, մասնակցող անձինք.

l) այն անձինք, ովքեր մարդասիրական նկատառումներով, ներառյալ՝ անհետաձգելի բժշկական օգնություն ստանալու համար, ներկայացրել են իրենց ուղևորության անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթեր, և նման անձին ուղեկցող անձը, կամ մերձավոր ազգականի հուղարկավորությանը մասնակցելու կամ ծանր հիվանդ մերձավոր ազգականին այցելելու համար:

3. Եթե Դանիայի Թագավորությունը վիզայի տրամադրման համար համագործակցում է արտաքին ծառայություն մատուցողի հետ, արտաքին ծառայություն մատուցողը կարող է ծառայության դիմաց գանձել վճար: Այս վճարը պետք է համաչափ լինի արտաքին ծառայություն մատուցողի՝ իր գործառույթներն իրականացնելու ընթացքում կատարած ծախսերին և չպետք է գերազանցի 30 եվրոն: Դանիայի Թագավորությունը բոլոր դիմողներին հնարավորություն է ընձեռում իրենց դիմումներն անմիջականորեն հանձնելու իր հյուպատոսություններին:

Արտաքին ծառայություն մատուցողն իր գործողություններն իրականացնում է Վիզայի օրենսգրքին համապատասխան և լիարժեք կերպով պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

ՀՈԴՎԱԾ 7

Վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումներին առնչվող ընթացակարգերի տևողությունը

1. Դանիայի Թագավորության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները վիզայի տրամադրման դիմումի վերաբերյալ որոշում ընդունում են վիզայի տրամադրման համար պահանջվող դիմումի և փաստաթղթերի ստացման օրվանից հետո 10 օրացուցային օրվա ընթացքում:

2. Առանձին դեպքերում վիզայի դիմումի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օրացուցային օր, հատկապես այն դեպքում, երբ դիմումը

լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունի:

3. Հրատապ դեպքերում վիզայի դիմումի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը կարող է կրճատվել մինչև 2 աշխատանքային օր կամ ավելի պակաս:

4. Եթե դիմում հանձնելու համար դիմողներից պահանջվում է հանդիպում ունենալ, ապա հանդիպումը, որպես կանոն, նշանակվում է հանդիպման համար դիմելու օրվանից հետո՝ երկու (2) շաբաթվա ընթացքում: Հիմնավորված հրատապ դեպքերում հյուպատոսությունը կարող է դիմողներին թույլ տալ իրենց դիմումները ներկայացնել առանց հանդիպում ունենալու, կամ հանդիպումը կարող է լինել անմիջապես:

ՀՈԴՎԱԾ 8

Մեկնումը կորած կամ գողացած փաստաթղթերի դեպքում

Հայաստանի Հանրապետության կամ Դանիայի Թագավորության այն քաղաքացիները, ովքեր Դանիայի Թագավորության կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում կորցրել են իրենց անձը հաստատող փաստաթղթերը, կամ ումից այդ փաստաթղթերը գողացել են, կարող են դուրս գալ Հայաստանի Հանրապետության կամ Դանիայի Թագավորության տարածքից Դանիայի Թագավորության կամ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից տրված՝ անձը հաստատող՝ սահմանը անցնելու իրավունք տվող վավեր փաստաթղթերի հիման վրա՝ առանց որևէ վիզայի կամ այլ թույլտվության:

ՀՈԴՎԱԾ 9

Վիզայի ժամկետի երկարաձգումը բացառիկ հանգամանքներում

Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր ֆորսմաժորային կամ մարդասիրական պատճառներով իրենց վիզայում նշված ժամկետում չեն կարող դուրս գալ Դանիայի Թագավորության տարածքից, վիզաների ժամկետներն անվճար երկարաձգվում են Դանիայի Թագավորության օրենսդրությանը

համապատասխան՝ իրենց բնակության պետություն վերադառնալու համար պահանջվող ժամանակահատվածով:

ՀՈԴՎԱԾ 10

Դիվանագիտական անձնագրերը

1. Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն վավեր դիվանագիտական անձնագրեր, կարող են մուտք գործել Դանիայի Թագավորության տարածք, այնտեղից դուրս գալ և տարանցմամբ անցնել՝ առանց վիզաների:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձինք Դանիայի Թագավորության տարածքում կարող են առանց վիզայի մնալ 90 օրվանից ոչ ավել ժամկետով՝ յուրաքանչյուր 180 օր ժամանակահատվածի ընթացքում:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների գտնվելու ժամկետը որոշելու նպատակով հաշվի է առնվում Շենգենյան դրույթները (Acquis) լիովին կիրառող ցանկացած այլ պետությունում 180-օրյա ժամանակաշրջանի ընթացքում գտնվելու ցանկացած ժամանակահատվածը: «Ցանկացած» հասկացությունը ենթադրում է տեղաշարժվելիս 180-օրյա վկայակոչվող ժամանակաշրջանի կիրառումը՝ հաշվի առնելով վերջին 180-օրյա ժամանակաշրջանի ընթացքում մնալու յուրաքանչյուր օրը, որպեսզի հաստատվի, թե արդյոք ցանկացած 180-օրյա ժամանակաշրջանի ընթացքում 90 օրվա պահանջը շարունակում է բավարարվել: *Inter alia*, դա նշանակում է, որ 90 օր անընդմեջ մնալու ժամանակահատվածի բացակայությունը թույլ է տալիս մնալ մինչև 90 օր ևս:

ՀՈԴՎԱԾ 11

Վիզաների տարածքային վավերականությունը

Պահպանելով ազգային անվտանգության վերաբերյալ Դանիայի Թագավորության ներպետական կանոններն ու կանոնակարգերը և տարածքային սահմանափակ վավերությամբ վիզաների մասին Եվրոպական միության կանոնները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրավունք ունեն ճամփորդելու Շենգենյան գոտու

անդամ պետությունների տարածքներով Եվրոպական միության քաղաքացիների հետ հավասար հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 12
Համաձայնագրի մշտադիտարկում

Կողմերի ներկայացուցիչներն անհրաժեշտության դեպքում կարող են հանդիպել Կողմերից մեկի առաջարկի հիման վրա՝ սույն Համաձայնագրի կիրարկումը քննարկելու համար, և եթե անհրաժեշտ է սույն Համաձայնագրի փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ ներկայացնել՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրի փոփոխություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 13
Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և կգործի այնքան ժամանակ քանի դեռ չի դադարեցվել սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

3. Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ առանձին արձանագրություններով, որոնք կդառնան Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

4. Յուրաքանչյուր Կողմ կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ ելնելով հասարակական կարգի, ազգային անվտանգության պաշտպանության կամ հասարակության առողջության պաշտպանության նկատառումներից: Կասեցման վերաբերյալ որոշման մասին մյուս Կողմը

ծանուցվում է ոչ ուշ, քան 48 ժամ առաջ՝ նախքան դրա ուժի մեջ մտնելը: Սույն Համաձայնագրի կիրառումը կասեցրած Կողմը անմիջապես տեղեկացնում է մյուս Կողմին, երբ կասեցման հիմքերը այլևս կիրառելի չեն:

5. Յուրաքանչյուր Կողմ կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել սույն Համաձայնագրի գործողությունը սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ընթացակարգի համաձայն, եթե նա համարում է, որ մյուս Կողմը չի կատարում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրով ստանձնած պարտավորությունները:

6. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը մյուս Կողմին տրված գրավոր ծանուցման միջոցով: Սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է նման ծանուցման ամսաթվից 90 օր հետո:

Կատարված է Կոպենհագեն քաղաքում, 2018 թվականի մարտի 14-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Ցանկացած տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝
ԷԴՎԱՐԴ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ	ԱՆԴԵՐՍ ՍԱՄՈՒԵԼՍԵՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետությունը կամ Դանիայի Թագավորությունը կարող են մասնակիորեն կասեցնել Համաձայնագրի գործողությունը, մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը, Համաձայնագրի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ընթացակարգին համապատասխան, եթե 10-րդ հոդվածի իրականացման մասով չարաշահումներ են տեղի ունենում մյուս Կողմի կողմից, կամ դրա իրականացումը հանգեցնում է սպառնալիքի՝ ուղղված հանրային անվտանգությանը:

10-րդ հոդվածի իրականացումը կասեցնելու դեպքում, Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն երկու Կողմերը պետք է նախաձեռնեն խորհրդակցություններ՝ նպատակ ունենալով լուծելու այն խնդիրները, որոնք հանգեցրել են կասեցման:

Որպես առաջնահերթություն՝ երկու Կողմերը հռչակում են իրենց հանձնառությունն ապահովել դիվանագիտական անձնագրերի բարձր մակարդակի փաստաթղթային անվտանգություն, մասնավորապես, դրանցում կենսաչափական տվյալների ներդրմամբ:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. մարտի 14-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Դանիայի Թագավորության Կառավարության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող հայերեն բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝

Սաթենիկ Աբգարյան